30
ՀՈՒՆԻՍ
2026

Luys Լույս®

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մի շարք պատգամավորների կողմից շրջանառության մեջ են դրվել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին[1] և «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագծերը[2] (այսուհետև՝ «Նախագծերի փաթեթ»):

Նախագծերի փաթեթով առաջարկվում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին կամ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունենան միայն այն քաղաքացիները, որոնք վերջին 365 օրվա ընթացքում 183 և ավելի օր փաստացի գտնվել են Հայաստանի Հանրապետությունում:

Սույն վերլուծության նպատակն է գնահատել առաջարկվող կարգավորումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածին, ինչպես նաև կիրառելի միջազգային չափանիշներին:

1. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Նախագծերի փաթեթով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունքի իրացման համար սահմանել լրացուցիչ պայման. այն է՝ քվեարկության կամ

[1] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=82271
[2] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=82276

հանրաքվեի օրվան նախորդող 48-րդ օրվա դրությամբ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ, դրան նախորդող 365 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 183 և ավելի օր գտնվելու պահանջը:

Նախագծերի փաթեթով նախատեսվում են սահմանափակ բացառություններ այն դեպքերի համար, երբ անձի բացակայությունը Հայաստանի Հանրապետությունից պայմանավորված է եղել հանրային ծառայության մեջ գտնվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով:

Նախագծերի փաթեթի ընդունման դեպքում հետևյալ անձինք կարող են զրկվել Ազգային ժողովի ընտրություններին կամ հանրաքվեին մասնակցելու հնարավորությունից.

- Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք մշտապես կամ ժամանակավորապես բնակվում են արտերկրում,
- Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք գտնվում են արտերկրում աշխատանքի, ընտանեկան, առողջական, գործարար գործունեության կամ անձնական այլ պատճառներով:

Այսպիսով, Նախագծերի փաթեթով Սահմանադրության 48-րդ հոդվածով նախատեսված երկու պայմաններին՝ քաղաքացիություն և 18 տարեկանը լրացած լինելը, ավելացվում է երրորդ պայմանը՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջը:

2. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 48-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«*Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք*»:

Այս դրույթը ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացման համար նախատեսում է երկու և միայն երկու պայման.

- անձը պետք է լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացի,

- Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը պետք է լրացած լինի անձի տասնութ տարին:

Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասը չի պարունակում ո՛չ բնակության, ո՛չ հաշվառման, ո՛չ էլ Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու որևէ պահանջ:

Հետևաբար Սահմանադրությունն Ազգային ժողովի ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունքը կապում է բացառապես քաղաքացիության և տարիքի հետ:

3. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 48-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻՆ

Օրենսդրական փաթեթը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց է մի քանի ինքնուրույն հիմքերով:

Ա. Սահմանադրությամբ չնախատեսված լրացուցիչ պայմանի սահմանում

Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ընտրական իրավունքի իրականացման պայմանները: Օրենսդրական փաթեթը նախատեսում է նոր պայման, որը Սահմանադրությամբ նախատեսված չէ:

Եթե սահմանադիրն ունեցած լիներ ընտրելու իրավունքը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու որոշակի ժամկետի հետ կապելու մտադրություն, ապա այդպիսի պահանջը կներառեր Սահմանադրության տեքստում, ինչպես դա արել է նույն հոդվածի այլ մասերում:

Բ. 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կառուցվածքային հակադրությունը

Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասը, որը կարգավորում է Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու իրավունքը, ուղղակիորեն նախատեսում է, որ թեկնածուն ընտրությանը նախորդող վերջին չորս տարիներին պետք է մշտապես բնակված լինի Հայաստանի Հանրապետությունում:

Այն փաստը, որ սահմանադիրը 48-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործել է բնակության պահանջը, բայց այն բաց է թողել նույն հոդվածի 1-ին մասից,

պատահական չէ: Բնակության պահանջի գիտակցված ներառումը 48-րդ հոդվածի 2-րդ մասում և դրա բացակայությունը 48-րդ հոդվածի 1-ին մասում վկայում են, որ սահմանադիրը նման պահանջ նախատեսել է միայն պասիվ, բայց ոչ ակտիվ ընտրական իրավունքի համար: Ուստի սահմանադրի այս միտումնավոր ընտրությունը սովորական օրենսդիրը չի կարող չեղարկել:

Այսպիսով, Սահմանադրության 48-րդ հոդվածի համակարգային մեկնաբանությունից հետևում է, որ օրենքով չի կարող սահմանվել ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքը սահմանափակող այնպիսի լրացուցիչ պայման, որը Սահմանադրությամբ նախատեսված չէ:

Գ. Սահմանադրության 48-րդ և 181-րդ հոդվածների կարգավորման տարբեր մոդելները

Սահմանադրության կառուցվածքը ևս հաստատում է, որ Ազգային ժողովի ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունքի պայմանները սահմանադիրը նախատեսել է սպառիչ կերպով:

Ի հակադրություն Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասի, որն անմիջականորեն սահմանում է Ազգային ժողովի ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունքի սուբյեկտներին և դրա իրականացման պայմանները, Սահմանադրության 181-րդ հոդվածի 2-րդ մասը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգավորումը վերապահում է Ընտրական օրենսգրքին՝ առանց ընտրական իրավունքի պայմանների սահմանադրական թվարկման:

Այս տարբերությունը վկայում է, որ սահմանադիրը կիրառել է կարգավորման տարբեր մոտեցումներ: Համապետական ընտրությունների և հանրաքվեների դեպքում Սահմանադրությունն ինքն է սահմանել ընտրական իրավունքի իրականացման պայմանները, մինչդեռ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում կարգավորման զգալի շրջանակ վերապահել է օրենսդրին:

Հետևաբար Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման առարկայի շրջանակում օրենսդրին չի վերապահվել որևէ մնացորդային հայեցողություն՝ ընտրելու կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի համար լրացուցիչ նյութական պայմաններ սահմանելու նպատակով: Նախագծերի փաթեթը, սակայն, հենց դա է անում՝ առանց 181-րդ հոդվածի 2-րդ մասի նման սահմանադրական վերապահման, ավելացնում է նոր նյութական նախապայման

այն իրավունքին, որի պայմանները սահմանադիրն արդեն իսկ սպառիչ կերպով ամրագրել է Սահմանադրության տեքստում: Օրենքով չի կարող վերաձևակերպվել կամ լրացվել Սահմանադրությամբ արդեն իսկ սպառիչ կերպով սահմանված ընտրական իրավունքի սուբյեկտային կազմը:

Դ. 48-րդ հոդվածի 4-րդ մասի սպառիչ բնույթը

Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է այն սպառիչ ցանկը, երբ անձը չի կարող ընտրել, ընտրվել կամ մասնակցել հանրաքվեին:

Այդպիսիք են՝

- դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք,
- դիտավորությամբ կատարված ծանր հանցանքի համար դատապարտված և պատիժ կրող անձինք:

Հայաստանի Հանրապետությունում չգտնվելը կամ երկրից բացակայելն այդ ցանկում ներառված չէ:

48-րդ հոդվածի համակարգային մեկնաբանությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ ընտրելու իրավունքի որևէ լրացուցիչ սահմանափակում կարող է սահմանվել միայն այն դեպքում, երբ դրա համար ուղղակի սահմանադրական հիմք գոյություն ունի:

4. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 75-ՐԴ ԵՎ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն, հիմնարար իրավունքները և ազատությունները կարգավորելիս, օրենքները պետք է սահմանեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Միաժամանակ, Սահմանադրության 80-րդ հոդվածը սահմանում է, որ հիմնարար իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էությունն անխախտելի է:

Այս սահմանադրական դրույթների համատեղ մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդիրը, հիմնարար իրավունքը կարգավորելիս, իրավասու է սահմանելու

դրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգային և կազմակերպական կանոններ, սակայն իրավասու չէ վերաձևակերպելու կամ նեղացնելու Սահմանադրությամբ սահմանված իրավունքի սուբյեկտային կազմը կամ բովանդակությունը:

Մինչդեռ Նախագծերի փաթեթը չի սահմանում ընտրական իրավունքի արդյունավետ իրականացման նոր կազմակերպական կամ ընթացակարգային մեխանիզմներ: Ընդհակառակը, այն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու սահմանադրական իրավունքը պայմանավորում է նոր նյութական նախապայմանով, որը նախատեսված չէ Սահմանադրության 48-րդ հոդվածով:

Այսպիսով, Նախագծերի փաթեթը դուրս է գալիս Սահմանադրության 75-րդ հոդվածով օրենսդրին վերապահված կարգավորման շրջանակներից և միջամտում է Սահմանադրությամբ անմիջականորեն սահմանված ընտրական իրավունքի բովանդակությանը: Արդյունքում, սահմանադրական կարգավորման մակարդակում երաշխավորված ընտրական իրավունքը վերափոխվում է սովորական օրենքի: Սա անհամատեղելի է Սահմանադրության 80-րդ հոդվածով ամրագրված՝ հիմնարար իրավունքների էության անխախտելիության սկզբունքի հետ:

5. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Միջազգային փորձը ևս վկայում է, որ քաղաքացիների՝ համապետական ընտրություններին մասնակցելու իրավունքը չի կարող սահմանափակվել ընտրություններից առաջ որոշակի ժամկետով երկրում գտնվելու հանգամանքով:

Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրքը»[3] սահմանում է, որ ընտրություններին մասնակցելու համար տևողության պահանջը կարող է կիրառվել միայն տեղական կամ համայնքային ընտրությունների դեպքում:

Նշված չափանիշը կարևոր է, քանի որ Նախագծերի փաթեթը վերաբերում է ոչ թե տեղական կամ համայնքային, այլ Ազգային ժողովի, այսինքն՝ համապետական ընտրություններին:

[3] https://docs-venice.coe.int/files/Code%20de%20conduite_GBR%202025_WEB_A5.pdf Part I, 1.1.c

Վենետիկի հանձնաժողովի «Հանրաքվեների վերաբերյալ բարենպաստ գործունեության վերանայված կանոնագիրքը»[4] նույն տրամաբանությունն է կիրառում նաև հանրաքվեների համար՝ նշելով, որ քաղաքացիների համար բնակության տևողության պահանջը կարող է սահմանվել միայն տեղական կամ համայնքային հանրաքվեների դեպքում, իսկ արտերկրում բնակվող քաղաքացիների հանրաքվեին մասնակցելու պայմանները չպետք է լինեն ավելի ծանր, քան ընտրությունների դեպքում:

Այսպիսով, Նախագծերի փաթեթը խնդրահարույց է ոչ միայն ՀՀ Սահմանադրության, այլև միջազգային փորձի տեսանկյունից:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումը, որով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Ազգային ժողովի ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունքը պայմանավորվում է նախորդ 365 օրվա ընթացքում առնվազն 183 օր Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու հանգամանքով, հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասին:

Այս եզրակացությունը հիմնվում է երեք փոխլրացնող փաստարկների վրա.

- Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ընտրական իրավունքի իրականացման պայմանների սպառիչ ցանկ՝ քաղաքացիություն և տասնութ տարին լրացած լինելը, և օրենսդրին չի վերապահում լրացուցիչ պայմաններ սահմանելու իրավասություն,
- 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կառուցվածքային համեմատությունը ցույց է տալիս, որ այն դեպքերում, երբ սահմանադիրը ցանկացել է նախատեսել բնակության պահանջ, դա արել է հստակ և ուղղակի ձևով,
- 48-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ընտրական իրավունքից զրկելու հիմքերի սպառիչ ցանկ, որում Հայաստանի Հանրապետությունում չգտնվելը ներառված չէ:

Նշված անհամապատասխանությունը հաստատվում է նաև Սահմանադրության 75-րդ և 80-րդ հոդվածներով. օրենսդիրն իրավասու է սահմանելու հիմնարար իրավունքների արդյունավետ իրականացման կազմակերպական և ընթացակարգային մեխանիզմներ, սակայն իրավասու չէ

[4] Venice Commission, **Revised Code of Good Practice on Referendums**, CDL-AD(2022)015, Part I, 1.1.c

վերասահմանելու Սահմանադրությամբ ամրագրված իրավունքի սուբյեկտային կազմը կամ խաթարելու դրա էությունը:

Վենետիկի հանձնաժողովի չափանիշները ևս հաստատում են, որ բնակության կամ փաստացի գտնվելու նման պահանջները միջազգային ընտրական իրավունքի տեսանկյունից թույլատրելի են միայն տեղական ընտրությունների և տեղական հանրաքվեների դեպքում և ոչ թե համապետական գործընթացների համար:

Այսպիսով, Սահմանադրությամբ բոլոր չափահաս քաղաքացիներին երաշխավորված ընտրելու և հանրաքվեին մասնակցելու հիմնական իրավունքը Նախագծերի փաթեթով սահմանափակվում է առանց սահմանադրական լիազորության: Հետևաբար, Նախագծերի փաթեթը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: